HSBC

Տոկոսագումարների և տոկոսադրույքների հաշվարկման կարգը

Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը վարկառուի համար տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:

Տոկոսագումարը հաշվարկվում է օրական՝ օգտագործելով հետևյալ բանաձևը.

I = R*L /365, որտեղ
I = մեկ օրվա տոկոսագումար
R = ընթացիկ տոկոսադրույք
L = վարկի մնացորդ

Տարեկան փաստացի տոկոսադրույքի չափը կախված է վարկի պայմաններից (գումար, ժամկետ, վարկի մարմանն ուղղված վճարների գումար և մարումների քանակ):

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$A = \sum_{n=1}^{N} \frac{CF_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}} = \sum_{n=1}^{N} \left(CF_n \times (1+i)^{\frac{-D_n}{365}} \right)$$

որտեղ՝
i տարեկան փաստացի տոկոսադրույքն է, որը սպառողի վարկավորման ընդհանուր ծախսն է՝ արտահայտված տրամադրված վարկի տարեկան տոկոսով, որն իր մեջ ներառում է բոլոր տոկոսներն ու այլ վճարումները, որոնք սպառողը պարտավոր է վճարել վարկի ստացման, ինչպես նաև դրա գործողության ողջ ընթացքում
A սպառողին տրամադրվող վարկի սկզբնական գումարը
n սպառողի կողմից վարկի մարմանն ուղղված վճարի (վարկի հիմնական գումար, տոկոսագումար և/կամ այլ վճար՝ ներառյալ վարկի ստացման պահին կատարվող վճար) հերթական համարը
N վճարումների քանակը
CF_n սպառողի կողմից վարկի ստացման պահին և/ կամ վարկի գործողության ընթացքում կատարված հերթական՝ n-րդ վճարի գումարն է (հիմնական գումար, տոկոսագումարներ և/կամ այլ վճարումների գումարներ)
D_n այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել վարկի ստացման օրից մինչև վարկի գումարի հերթական՝ n-րդ մարման օրը ներառյալ

Տարեկան փաստացի տոկոսադրույքի և տոկոսագումարի հաշվարկման ներկայացուցչական օրինակներ

Անհատական սպառողական վարկի պայմաններ

- Վարկի գումար՝ 1,500,000 ՀՀ դրամ
- Հաստատուն տարեկան անվանական տոկոսադրույք՝ 16%
- Մարման ժամկետ՝ 24 ամիս, կամ 730 օր
- Մարման կարգ՝ ամսական ոչ հավասարաչափ մարումներ (վարկի հիմնական գումարը մարվում է հավասար ամսական վճարներով, իսկ հաշվեգրված տոկոսների գումարը նվազում է հիմնական գումարի մարմանը զուգընթաց)
- Վարկային հաշվի սպասարկման միանվագ վճար՝ 20,000 ՀՀ դրամ
- Վարկի տրամադրման օր՝ 01/11/2017
- Առաջին մարման օր՝ 01/12/2017
- Վարկի վերջնաժամկետ՝ 01/11/2019
- Ամսական վճարման չափը՝
  - Առաջին ամսվա վճարման չափը 82,226.03 ՀՀ դրամ, որից տոկոսագումար՝ 19,726.03 ՀՀ դրամ
  - Երկրորդ ամսվա վճարման չափը 82,034.25 ՀՀ դրամ, որից տոկոսագումար 19,534.25 ՀՀ դրամ
  - Վերջին ամսվա վճարման չափը 63,349.32 ՀՀ դրամ, որից տոկոսագումար 849.32 ՀՀ դրամ

Հաշվարկված տոկոսագումար վարկի ամբողջ ժամկետի համար՝ 249,671.23 ՀՀ դրամ
Տարեկան փաստացի տոկոսադրույք՝ 18,78%

Ավտոմեքենայի վարկի պայմաններ

- Վարկի գումար՝ 4,500,000 ՀՀ դրամ
- Փոփոխվող անվանական տարեկան տոկոսադրույք՝ 14%
- Մարման ժամկետ՝ 48 ամիս, կամ 1,460 օր
- Մարման կարգ՝ ամսական ոչ հավասարաչափ մարումներ (վարկի հիմնական գումարը մարվում է հավասար ամսական վճարներով, իսկ հաշվեգրված տոկոսների գումարը նվազում է հիմնական գումարի մարմանը զուգընթաց)
- Վարկային հաշվի սպասարկման միանվագ վճար՝ 50,000 ՀՀ դրամ
- Ապահովագրության վճար՝ 187,500 ՀՀ դրամ (ավտոմեքենայի գնահատված արժեք՝ 7,500,000 ՀՀ դրամ)
- Ավտոմեքենայի գնահատման վճար՝ 8,000 ՀՀ դրամ
- ՃՈ կողմից տրամադրվող տեղեկանք գույքի նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ՝ 3,300 ՀՀ դրամ
- Գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վճար՝ 23,900 ՀՀ դրամ
- Նոտարական ծառայության վճար (ներառյալ նոտարական վավերացման պետական տուրքը)՝ 13,000 ՀՀ դրամ

- Գրավի իրավունքի պետական գրանցման պետական տուրք և վճար՝ 2,200 ՀՀ դրամ
- Վարկի տրամադրման օր՝ 01/12/2017
- Առաջին մարման օր՝ 01/01/2018
- Վարկի վերջնաժամկետ՝ 01/12/2021
- Ամսական վճարման չափը՝
  - Առաջին ամսվա վճարման չափը 147,256.85 ՀՀ դրամ, որից տոկոսագումար՝ 53,506.85 ՀՀ դրամ
  - Երկրորդ ամսվա վճարման չափը 146,142.12 ՀՀ դրամ, որից տոկոսագումար 52,392.12 ՀՀ դրամ
  - Վերջին ամսվա վճարման չափը 94,828.77 ՀՀ դրամ, որից տոկոսագումար 1,078.77 ՀՀ դրամ

Հաշվարկված տոկոսագումար վարկի ամբողջ ժամկետի համար՝ 1,286,933.22 ՀՀ դրամ
Տարեկան փաստացի տոկոսադրույք՝ 23.03%

Անշարժ գույքի գրավով ապահովված վարկի պայմաններ

- Վարկի գումար՝ 2,000,000 ՀՀ դրամ
- Փոփոխվող անվանական տարեկան տոկոսադրույք՝ 13%
- Մարման ժամկետ՝ 60 ամիս, կամ 1825 օր
- Մարման կարգ՝ վարկի հիմնական գումարը և հաշվեգրված տոկոսները մարվում են անուիտետային սկզբունքով
- Վարկային հաշվի սպասարկման միանվագ վճար՝ 50,000 ՀՀ դրամ
- Գույքի ապահովագրավճար հաշվարկած վարկի գումարի նկատմամբ՝ 5,000 ՀՀ դրամ
- Գույքի գնահատման վճար՝ միջինը 17,500 ՀՀ դրամ
- Գույքի գրավադրման հետ կապված նոտարական և պետական այլ վճարներ՝ 52,000 ՀՀ դրամ
- Վարկի տրամադրման օր՝ 01/12/2017
- Առաջին մարման օր՝ 01/01/2018
- Վարկի վերջնաժամկետ՝ 01/12/2022
- Ամսական հավասարաչափ վճարման չափը 45,506.15 ՀՀ դրամ, որից
  - Առաջին ամսվա տոկոսագումարը 22,082.19 ՀՀ դրամ
  - Երկրորդ ամսվա տոկոսագումարը 21,823.57 ՀՀ դրամ
  - Վերջին ամսվա տոկոսագումարը 486.95 ՀՀ դրամ

Հաշվարկված տոկոսագումար վարկի ամբողջ ժամկետի համար՝ 730,922.79 ՀՀ դրամ
Տարեկան փաստացի տոկոսադրույք՝ 17.35%

Օվերդրաֆտի պայմաններ

- Օվերդրաֆտի սահմանաչափ՝ 500,000 ՀՀ դրամ
- Օվերդրաֆտի տարեկան անվանական տոկոսադրույք՝ 15%
- Հաշվարկման ժամկետ՝ 12 ամիս, կամ 365 օր
- Օվերդրաֆտի ամսական վճար՝ չի գանձվում
- Մարումներ՝ առնվազն ամիսը մեկ անգամ Օվերդրաֆտի սահմանաչափի օգտագործված մասի՝ (ներառյալ հաշվեգրված տոկոսները) նվազագույնը 10%-ի չափով
- Օվերդրաֆտի տրամադրման օր՝ 01/11/2017
- Առաջին վճարման օր՝ 01/12/2017

Տարեկան փաստացի տոկոսադրույք՝ 16,08%

Կրեդիտ քարտի պայմաններ

- Քարտի տեսակ՝ Մաստեր Քարտ Ստանդարտ
- Տրամադրվող վարկային սահմանաչափ՝ 1,000,000 ՀՀ դրամ
- Անվանական տարեկան տոկոսադրույք - 18%
- Հաշվարկման ժամկետ՝ 12 ամիս, կամ 365 օր
- Մարումներ՝ առնվազն ամիսը մեկ անգամ վարկային սահմանաչափի օգտագործված մասի՝ (ներառյալ հաշվեգրված տոկոսները 1) նվազագույնը 10%-ի չափով՝ նվազագույնը՝ 10,000 ՀՀ դրամ:
- Քարտային հաշվի սպասարկման ամսական վճար՝ 1,000 ՀՀ դրամ
- Քարտի վարկային սահմանաչափի տրամադրման օր՝ 01/11/2017
- Առաջին վճարման օր՝ 01/12/2017

Տարեկան փաստացի տոկոսադրույք վարկային սահմանաչափի անկանխիկ օգտագործման դեպքում՝ 21,01%
Տարեկան փաստացի տոկոսադրույք վարկային սահմանաչափի կանխիկ օգտագործման դեպքում՝ 21,01%

[1]Տոկոսները հաշվեգրվում են վարկային սահմանաչափի օգտագործված մասն առաջին վճարման հաշվետու ժամանակահատվածում ամբողջությամբ չմարելու դեպքում, երկրորդ ամսվանից սկսած մինչև կատարված ծախսերի լրիվ մարումը՝ տոկոսը կիրառելով դրա սկզբնական գումարի վրա՝ այդ ծախսերի գոյացման պահից:

Թարմացվել է՝ 16/01/2019 15:00